

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

10 դեկտեմբեր 2013թ.

N 90 -Ն

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

### ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի N 536-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 11-րդ հոդվածներով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ մասով և 14-րդ հոդվածի 1-ին մասով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝

#### **Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Սահմանել Երևանի քաղաքային համայնքում (այսուհետ՝ Երևանի) տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1) Երևանի վարչական տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝

ա. մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ.

բ. 101-ից 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 100000 դրամ.

գ. 501-ից 1500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 200000 դրամ.

դ. 1501 քառակուսի մետր և ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 300000 դրամ:

2) Երևանի տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝

ա. մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հողամասերի համար՝ յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար՝ 500 դրամ.

բ. 501-ից-1500 քառակուսի մետր մակերես ունեցող հողամասի համար 250.000 դրամ գումարած 500 քառակուսի մետրը գերազանցող յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար ևս 250 դրամ:

գ. 1501 քառակուսի մետրից ավելի մակերես ունեցող հողամասերի համար 500.000 դրամ գումարած 1500 քառակուսի մետրը գերազանցող յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար ևս 50 դրամ:

3) Երևանի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու համար՝ յուրաքանչյուր մասնակցից 10000 դրամ:

4) Երևանի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝

ա. կենցաղային աղբի համար բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 200 ՀՀ դրամ,

բ. ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 2500 ՀՀ դրամ,

5) Երևան քաղաքում շինարարական և խոշոր եզրաչափի մեկ խորանարդ մետր աղբի հավաքման և փոխադրման թույլտվության համար տեղական վճարի դրույքաչափը սահմանել 500 դրամ:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի ա), բ), գ) և դ) պարբերությունների նկատմամբ ենթակա է կիրառման Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության բնակավայրերի հողերի կադաստրային գնահատման կարգը, տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցները և սահմանները հաստատելու մասին» N 1746-Ն որոշմամբ Երևանի համար սահմանված 1-ից մինչև 9-ը տարածահաշվարկային գոտիավորումը, կիրառելով 1.9 բազային (առավելագույն) գործակիցը, ընդ որում՝ տարածահաշվարկային 2-րդ գոտուց սկսած՝ յուրաքանչյուր հաջորդ գոտու նկատմամբ կիրառվում է լրացուցիչ նվազեցնող 0.2 գործակից:

3. Ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 28-ի «Երևանի քաղաքային համայնքում տեղական վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N 536-Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**